

լու համար. եւ սկսան ամէն տեղ զինք բամբասել: Ա՛րսէին, թէ Սարգիս Ս. Յակոբայ նուէրները կընց, զոր Զմիւռնիա ժողոված էր նուիրակութեամբ, թէ քարոզներուն մէջ կ'ըսէ թէ «աւելի աղէկ է բոլոր տարին պահք չպահել քան թէ ընկերը բամբասել», թէ «սիսուան հատիկը արքայութեան դուռը չի կրնար բանալ», թէ կ'արհամարհէ աղգին պահքերը, աղուհացից մէջ եւ այլ ուրբաթ օրեր ձէթ կ'ուտէ, ինքը զուտ ֆռանկ է, քաղկեդոնականները կը սիրէ եւ լուսաւորչեանները կ'ատէ: Այս եւ նման խօսքերով պարզամիտները Սարգսի դէմ կը գրգռէին, եւ տեսնելով որ Յակոբ Պատրիարք բոլորովին լռութիւն կը պահէ, եւս առաւել կը գրգռուէին: Սարգիս Պատրիարքին դիմեց եւ ըսաւ թէ պէտք չէ լռել այս հաջողներուն առջեւ, ապա թէ ոչ զինքն ալ կը զրպարտեն. վասն զի ասոնք քիչ ետքը Պատրիարքին դէմ ալ խօսելու եւ գործելու սկսան, զինք մատնելով տէրութեան: Աերջապէս Յակոբ Սարգսի խնդիրը ներկայացուց կնգղաւորաց ժողովին, որոնք Սարգսէն երուսաղեմայ նուիրահաւաքութեան հաշիւը պահանջեցին: Յակոբ թէպէտ գիտէր որ Սարգիս ամբողջն երուսաղէմ հասուցած էր եւ Գրիգոր Շղթայակիր Պատրիարքէն ընկալագիր առած էր եւ ինքն ալ վրան ստորագրած էր, սակայն լռեց: Ուստի, իբրեւ գահերէց, պատասխան պահանջեց Սարգսէն: Սարգիս ծիծաղերես հարցուց Պատրիարքին. «Ս. Յակոբայ առաջնորդը